ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների կատարման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/04» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի հունիսի 13-ին կնքված N ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/04 պայմանագրում 2019 թվականի հուլիսի 4-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Պայմանագրի շրջանակներում կատարման ենթակա աշխատանքներից ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Սպիտակ քաղաքի նստավայրի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Հատկացված ֆինանսական միջոցների մասով հաստատվել է Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ» վերտառությամբ Հավելված N 2-ը:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 7.5 և 7.13:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

13,06.2019թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԹԻՎ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/04» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«04» հոկտեմբեր 2019թ.

ք. Երևան

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՕՐԻՈՆ 7» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Սարգսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 13.06.2019թ. կնքված թիվ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/04» գնման պայմանագրի, (այսուհետ՝ Պայմանագիր), 7.5 և 7.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Պայմանագրով սահմանված կատարման ենթակա աշխատանքներից ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Սպիտակ քաղաքի նստավայրի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար (չափաբաժին N 1) նախատեսվել են ֆինանսական միջոցներ՝ Կողմերը որոշեցին հատկացված ֆինանսական միջոցների մասով հաստատել Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ» վերտառությամբ Հավելված N 2-ը՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

1.2 Պայմանագրի N 1 հավելված հանդիսացող ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ-ով նախատեսված մնացած աշխատանքների (չափաբաժին N 2, 3, 4, 5) կատարումը կիրականացվի համաձայն Պայմանագրի 7.13 կետի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	***«Օրիոն 7» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	ք.Երևան, Մամիկոնյանց 27 շենք 126 բն.
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ 220453330684000
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ 00147538
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ակբա-Կրեդիտ-ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Ղեկավար Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Ն.Սարգսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/

Հավելված N 1
« » հունիսի 2019 թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 2
«04» հունիսի 2019 թ. կնքված
N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/04» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/504	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	936000	936000	936000	936000	936000	936000	936000	936000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դպրական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
«Օրիոն 7» ՍՊԸ
ք.Երևան, Մամիկոնյանց 27 շենք 126 բն.
Հ/Հ 220453330684000
ՀՎՀՀ 00147538
«Ակբա-Կրեդիտ-ագրիկոլ բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ն.Սարգսյան

/ստորագրություն/

Կ.Տ.